ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 23.11.2015թ. ստացվել է բողոք:

Բողոք բերող անձ՝ «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ

Պատվիրատու՝ ՀՀ Արարատի մարզպետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ 15/07» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ, ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից հակակարկտային կայանների ձեռքբերում:

Բողոքի առարկան և պահանջը՝

1. Կիրառել ժամանակավոր միջոց՝ կողմերի միջև պայմանագրի կնքման մասին որոշումը կասեցնել,
2. չեղյալ հայտարարել 20.11.2015թ. կայացված «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ 15/07» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրությամբ «Լոկատոր» ՓԲԸ-ի հայտը անբավարար ճանաչելու որոշումը,
3. պայմանագիրը կնքված լինելու դեպքում հայտարարել 18.11.2015թ. կայացված «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ 15/07» ծածկագրով ընթացակարգն ապօրինի հայտարարել:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների բողոքարկման խորհուրդ համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ